ամուսնությունը համահայր և համամայր եղբայրների ու քույրերի, կամ մորաքրոջ և հորեղբոր զավակների միջև: Նման ամուսնություններն ընդունելի չեն կենսաբանական և բարոյական տեսանկյունից:

Նոր օրենսգրքում կատարված նորամուծություններից են ամուսնական պայմանագրի և խնամատար ընտանիքի ինստիտուտները: Ամուսնական պայմանագրի դրական կամ բացասական կողմերը դժվար է առանձնացնել, բայց, այնուամենայնիվ, այս ինստիտուտը հնարավորություն է տալիս առավել նվազագույնի հասցնել ամուսինների գույքային իրավունքների և պարտականությունների վերաբերյալ վեճերը: ՀՀ ընտ. օր. 27 հոդվածը սահմանում է. «Ամուսնական պայմանագիրը ամուսնացող անձանց համաձայնությունն է կամ ամուսինների համաձայնությունը, որով որոշվում են ամուսինների գույքային իրավունքներն ու պարտականությունները ամուսնության և (կամ) այն լուծելու ընթացքում»: Այսպիսով, ամուսնական պայմանագիրն ունի բացառապես գույքային բնույթ: Դրանով կարող են կարգավորվել միայն ամուսինների միջև առաջացող գույքային հարաբերությունները՝ կապված գույքի ձեռք բերման, ամուսինների միջև գույքային իրավունքների ու պարտականությունների սահմանման, եկամուտների և ծախսերի բաշխման և այլ գույքային բնույթի հարցերի հետ: Օրենքն ուղղակիորեն սահմանում է, որ ամուսնական պայմանագիրը չի կարող կարգավորել ամուսինների միջև առաջացող անձնական ոչ գույքային հարաբերությունները: Ինչ վերաբերում է խնամատար ընտանիքին, ապա այս ինստիտուտը, անկասկած, դրական երևույթ է, քանի որ այն հնարավորություն է տալիս ծնողական խնամքից զրկված երեխաներին տալ դաստիարակության այլ ընտանիքների, որոնք կհաղորդեն ջերմություն, հոգատարություն և պատշաճ խնամք որբացած երեխաներին:

Նոր օրենսգիրքի դրական կողմերից է հատկապես երեխաների իրավունքներին առանձին գլուխ նվիրելը (գլուխ 10)՝ չնայած Հայաստանի Հանրապետությունում գործում է առանձին օրենք «Երեխաների իրավունքների մասին»:

Ճիշտ է, նոր օրենսգիրքը կատարյալ չէ և ունի որոշակի բացթողումներ և թերություններ, սակայն նոր օրենսգրքի առավելությունը նախկինի համեմատությամբ ակնհայտ է:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Իրավաբան ուսանողների համար «Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայով կազմակերպվում է իրավաբան ուսանողների հանրապետական երկրորդ գիտաժողովը: Գիտաժողովին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության բոլոր իրավաբանական ԲՈՒՀ-երի և ԲՈՒՀ-երի իրավաբանական ֆակուլտետների 3-րդ և բարձր կուրսերի ուսանողները: Հայտերն ընդունվում են մինչև 2005թ.-ի փետրվարի 25-ը, ժամը 17ը: Ցանկացողները կարող են դիմել ՀԵԻԱ կենտրոնական գրասենյակ՝ հետևյալ հասցեով. Նալբանդյան 7, բն. 2:**
- **Բոլոր իրավաբանական ԲՈՒՀ-երը և ԲՈՒՀ-երի իրավաբանական ֆակուլտետներն այսուհետ կարող են իրենց հայտարարությունները, ինչպես նաև ներբուհական և միջբուհական կյանքին վերաբերող տեղեկությունները զետեղել «Իրավաբան ուսանող» լրատուի մյուս համարներում: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀԵԻԱ Երևանի կենտրոնական գրասենյակ:**

Լրատուն կազմեցին ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի՝ Իրավաբան ուսանողների բաժանմունքի անդամները,
այդ թվում՝
4-րդ կուրսի ուսանողներ,
Լյուդվիգ Դավթյանը,
Անի Սիմոնյանը,
Աննա Հովհաննիսյանը

«Իրավաբան ուսանող» լրա-տուն հրատարակվել է Հայաս-տանի երիտասարդ իրավա-բանների ասոցիացիայի աջակ-ցությամբ ԱՄՆ Դեսպանատան միջոցներով՝ «Իրավաբանա-կան ռեսուրսներ և իրավաբա-նական օգնություն» ծրագրի շրջանակներում:

ԻՐԱՎԱԲԱՆ ՈՒՍԱՆՈՂ ԼՐԱՏՈՒ

Հեռ.՝ (374 1) 54-01-99,
ֆաքս՝(374 1) 58-02-99,
ինտերնետային կայք՝
www.lsd.ayla.am,
էլ.փոստ՝ lsd@ayla.am

Լրատվական գործունեություն իրականացնող «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ,

հասցեն՝
ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2
Պետական գրանցման
վկայականի համարը՝ 03Ա 057970,
տրված՝ 27.12.2002թ.

Թողարկման պատասխանատուներ՝
ԼՅՈՒԴՎԻԳ ԴԱՎԹՅԱՆ
ԱՆԻ ՍԻՄՈՆՅԱՆ

«ԻՐԱՎԱԲԱՆ ՈՒՍԱՆՈՂ» ԼՐԱՏՈՒՆ ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ

Տպաքանակը՝ 500 օրինակ
Ծավալը՝ 0.5 տպ. մամուլ
Ստորագրված է տպագրության 31.01.2005թ.

Ձևավորումը և տպագրությունը
ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՀՐ ՍՊԸ
ԼՈՒՍԱԿՆ
հրատարակչության

Հասցե՝ Գրիգոր Լուսավորիչ 6
Հեռ.՝ 52.79.74, 52.79.47
Էլ. փոստ՝ lusakn@rambler.ru

ԼՐԱՏՈՒ թիվ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ
ԻՐԱՎԱԲԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԻՐԱՎԱԲԱՆ ՈՒՍԱՆՈՂ

Տպագրության Բ փարի

Մարդու իրավունքների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից է իր իրավունքների իմացությունն ու բարձր իրավագիտակցությունը, որի ապահովմանն ու իրականացմանն է ուղղված Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի Իրավաբան ուսանողների բաժանմունքի գործունեությունը: Այն, իր կանոնադրական առաքելությանը համապատասխան, լուրջ քայլեր է ձեռնարկում երկրում իրավագիտակցության մակարդակի, իրավաբանական կրթության որակի բարձրացման ուղղությամբ: Բաժանմունքում ընդգրկված ուսանողների շնորհիվ այսօր նկատելի է իրավաբան ուսանողների ակտիվությունը ուսումնական, գիտակրթական և հետազոտական աշխատանքների ոլորտում, որն էլ, իր հերթին, նպաստում է կիրթ և զարգացած հասարակության կայացմանը:

Երիտասարդ իրավաբանները շարունակում են իրենց մասնակցությունն ունենալ հանրապետությունում ընթացող տարաբնույթ իրավական գործընթացներին՝ սահմանադրական բարեփոխումներ, դատաիրավական ռեֆորմներ և այլ ակտուալ խնդիրներ: Իրավաբան ուսանողների կազմակերպած դասընթացներն ու սեմինարները, համապատասխան հրատարակություններն ու այլ միջոցառումները իրենց նպաստն են բերում քաղաքացիական հասարակության կայացման գործին:

ԳԻՏԱԺՈՂՈՎ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ

2004 թ.-ի նոյեմբերի 25-ին ժամը 11.00-ին Երևանում՝ Թեքեյան Կենտրոնում, տեղի ունեցավ «Սահմանադրական բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական առաջին գիտաժողովի

Գիտաժողով Թեքեյան Կենտրոնում, 25.11.2004թ.

եզրափակիչ՝ բանավոր փուլը, որը կազմակերպել էր Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի Իրավաբան ուսանողների բաժանմունքը: Գիտաժողովի հովանավորներն էին Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի իրավական նախաձեռնության Հայաստանի գրասենյակը, Հայաստանի իրավաբանական հիմնադրամը, «Բուկինիստ» գրատունը: Գիտաժողովի նպատակն էր սահմանադրական իրավունքի բնագավառում բարձրացնել իրավաբան ուսանողների գիտելիքների մակարդակը, ինչպես նաև՝ նպաստել ՀՀ-ում սահմանադրական բարեփոխումներին:

Գիտաժողով Թեքեյան Կենտրոնում, 25.11.2004թ

Գրավոր զեկույցների և բանավոր զեկուցումների գնահատման արդյունքում՝ գիտաժողովի գրավոր փուլի և, միաժամանակ, գիտաժողովի հաղթող ճանաչվեց Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի Նորա Կարապետյանը, բանավոր փուլի հաղթող ճանաչվեց Հայաստանում Ֆրանսիական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի երրորդ կուրսի ուսանողուհի Անի Ղարաջյանը: «Հրաչյա Աճառյան» համալսարանի իրավաբանական ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանող Խաչիկ Հարությունյանն արժանացավ հատուկ մրցանակի՝ իր գրավոր զեկույցում ներկայացրած հետաքրքիր գաղափարների համար: Գիտաժողովի հաղթողներն արժանացան թանկարժեք մրցանակների: Մյուս մասնակիցներն ստացան

գիտաժողովի մասնակցության հավաստագրեր: Գիտաժողովի գրավոր և բանավոր աշխատանքները գնահատելու համար հրավիրվել էին սահմանադրական իրավունքի ճանաչված մասնագետներ: Բանավոր փուլում որպես դատավորներ հանդես եկան ՀՀ Նախագահի աշխատակազմի պետահրավական վարչության պետ Վրեժ Գասպարյանը, Ժողովրդավարության և ընտրությունների աջակցության միջազգային ինստիտուտի հարավային Կովկասի ներկայացուցիչ և հայաստանյան գրասենյակի գլխավոր պատասխանատու, միջազգային իրավաբան Արմինե Առաքելյանը և Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի փոխնախագահ Դավիթ Աբգարյանը:

Գիտաժողովի անցկացումը լայն արձագանք գտավ նաև ԶԼՄ-ների շրջանում: Բանավոր փուլի աշխատանքները լուսաբանեցին «Առավոտ» և «Ազգ» օրաթերթերը, «Հայ TV», «Արմենիա», «ԱրմՆյուզ» և «Էջմիածին» հեռուստաընկերությունները:

Գիտաժողովի լավագույն զեկույցների թեզիսներով հրատարակվել է գրքույկ, որն անվճար տարածվել է երիտասարդ իրավաբանների և փաստաբանների շրջանում:

ԱՆՑԿԱՑՎԵՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԻՎ 18 ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

2004 թվականի նոյեմբերի 4-ից 30-ը «Վորլդ Վիժն Ինքերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Երեխաների պաշտպանություն» ծրագրի շրջանակներում Նուբարաշենի հանրապետական թիվ 18 հատուկ կրթահամալիրում անցկացվեց «Ո՞ն է իմ իրավունքը և ի՞նչ եմ պարտավոր անել ես» խորագրով ոչ ֆորմալ կրթական ծրագիրը: Ծրագիրն իրականացվեց Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի Իրավաբան ուսանողների բաժանմունքի հետ համատեղ և վերջինիս աջակցությամբ:

Նուբարաշենի գիշերօթիկ դպրոց. նոյեմբեր, 2004թ.

Դասընթացի նպատակն էր իրավաբան ուսանողների մասնակցությամբ բարձրացնել հատուկ կրթահամալիրի աշակերտների իրավագիտակցությունը, ինչպես նաև՝ ապահովել նրանց կապը հասարակության առավել ակտիվ խմբի՝ երտասարդության հետ: Այսպիսի միջոցառումներն ըստ էության կնպաստեն նման հիմնարկներում գտնվող երեխաների պատշաճ դաստիարակությանը, նրանց մոտ բարոյական արժեքների ձևավորմանն ու զարգացմանը:

Անշուշտ, գիշերօթիկ դպրոցի երեխաները, հեռու լինելով ընտանեկան ուշադրությունից, ջերմությունից, զրկված լինելով ընտանեկան ջերմ մթնոլորտից, ստեղծում են իրենց յուրահատուկ ներքին միջավայրը, որտեղ գործում են այլ «օրենքներ»: Ընտանիքի բացակայությունը կամ նրա ոչ լիարժեքությունը երեխայի մոտ ձևավորում են յուրահատուկ հոգեբանություն, որտեղ հաճախ բացակայում են այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են ջերմությունը, հոգատարությունը, հարգանքը մարդկանց և սոցիալապես ընդունված վարքագծի կանոնների նկատմամբ: Ուստի, հանցավորության (հատկապես անչափահասների) դեմ պայքարի համար պետք է լուրջ ուշադրություն դարձնել վերոնշյալ հիմնարկներում պահվող երեխաների նկատմամբ վերաբերմունքին և նրանց դաստիարակության խնդրին, որը մշտապես պետք լինի ոչ միայն պետական իշխանության, այլև ամբողջ հասարակության ուշադրության կենտրոնում:

ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ ԱՌԱՋԱԴԵՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

Գիտատեխնիկական զարգացմանը զուգընթաց՝ արդի ժամանակաշրջանում չափազանց կարևորվում է կրթության ու գիտության դերը ցանկացած հասարակությունում: Ներկայումս մեր հանրապետությունում նույնպես նկատելի է նման առաջընթաց կրթության ոլորտում: Այդ են վկայում այսօր միջազգային և ներպետական մակարդակով գործող մի շարք հիմնադրամների կողմից առաջադեմ ուսանողներին հատկացվող կրթաթոշակները, նրանց վարձերի զեղչման և այդպիսի ուսանողների վարձավճարների փոխանցման բազմաթիվ հնարավորությունները: Նման միջոցներն առաջին հերթին կոչված են աջակցելու ուսանողներին՝ որոշակիորեն բարելավել սոցիալական վիճակը, ինչը կարևոր գործոն է առաջադիմության համար. չէ՞ որ առաջադեմ ուսանողների զգալի մասի սոցիալական վիճակն այնքան էլ բարվոք չէ, և երկրորդ հերթին այսպիսի հնարավորությունները խրախուսող միջոց են և խթանում են ուսանողների գիտակրթական ակտիվությանը:

Պետք է նշել, որ նման հնարավորություններից օգտվելու առաջնահերթ նախապայման է հանդիսանում ուսանողի առաջադիմությունը ԲՈՒՀ-ում: Բացի դրանից, հատկապես կարևորվում են գիտական հետազոտություններն ու դրանց արդյունքում տպագրված գիտական աշխատանքների ու հոդվածների առկայությունը: Լուրջ ուշադրություն է դարձվում նաև միջբուհական և ներբուհական կյանքին ուսանողի ակտիվ մասնակցությանը, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում նրա ներգրավմանն ու գործունեությանը:

Այսպիսով, գերազանց սովորելը այսօր էլ գնահատվում է մեր հասարակությունում, իսկ գիտելիքների առկայությունը արժանավայել կյանքի կարևոր նախադրյալներից է:

Վերոնշյալի հետ կապված, որպես օրինակ, կարելի է նշել Հայ-ռուսական համագործակցության ասոցիացիայի և Համահայկական երիտասարդական հիմնադրամի կողմից հատկացված «Գիտելիք» անվանական կրթաթոշակը շուրջ 130 ուսանողների, որոնցից 6-ը Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ուսանողներ են: Անվանական կրթաթոշակի արժանացել և համապատասխան հավաստագրեր են ստացել նաև ՀԵԻԱ Իրավաբան ուսանողների բաժանմունքի ղեկավար, ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Լյուդվիգ Դավթյանը և Իրավաբան ուսանողների բաժանմունքի անդամ, ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի Արմինե Ավետիսյանը:

ԴԱՏԱՀԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Դատահիրավական բարեփոխումների արդյունքում վերջերս ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեցին չափազանց կարևոր նշանակություն ունեցող մի շարք օրենքներ, այդ թվում՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Ընտանեկան և Աշխատանքային օրենսգրքերը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը Ազգային ժողովի կողմից ընդունվեց 2004 թ.-ի նոյեմբերի 9-ին, իսկ ՀՀ Նախագահի կողմից ստորագրվեց 2005 թ.-ի հունվարի 13-ին:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի քննարկում, 25.10.2004թ.

Պետք է ընդգծել, որ վերոնշյալ օրենքի մշակման գործում մեծ է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի դերը, որն էլ, իր առաքելությանը համապատասխան, դարձյալ հետևողականորեն շարունակում է աշխատանքներ տանել մեր երկրում փաստաբանության ինստիտուտի զարգացման և կայացման ուղղությամբ:

2004 թվականի հոկտեմբերի 25-ին Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի իրավական նախաձեռնության հայաստանյան գրասենյակում տեղի ունեցավ առաջին ընթերցմամբ ընդունված «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկման աշխատանքային հանդիպումը, որին մասնակցեցին ՀՀ-ում գործող երկու փաստաբանների միությունների, ՀՀ Արդարադատության նախարարության, Եվրոխորհրդի հայաստանյան գրասենյակի և Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի իրավական նախաձեռնության հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչներ: Հանդիպմանը մասնակցեց և առաջարկներով հանդես եկավ ՀԵԻԱ-ի նախագահ, փաստաբան Կարեն Զադոյանը: Վերջինիս կողմից ներկայացված գրեթե բոլոր առաջարկները ներառվեցին երկրորդ ընթերցման ներկայացվելիք օրենքի նախագծի տարբերակում:

Ավելացնենք, որ «Փաստաբանության մասին» ՀՀ նոր օրենքն զգալիորեն բարձրացրել է փաստաբանի դերը և այս առումով ունի բավականին առավելություններ նախկինի համեմատությամբ: Օրինակ, ի տարբերություն 1998 թ.-ի «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ նոր օրենքը սահմանում է, որ քաղաքացիական գործերով ներկայացուցչության իրավունք ունի միայն փաստաբանը: Նոր օրենքի առավելություններից է հատկապես այն, որ նախատեսում է փաստաբանական պալատի ձևավորումը, ինչն, ըստ էության, համապատասխանում է փաստաբանության ինստիտուտի միասնականությանը: Իհարկե, նոր օրենքում ևս կան որոշակի դրույթներ, որոնք ենթակա են փոփոխման, և այս ուղղությամբ ՀԵԻԱ-ն կշարունակի իր աշխատանքները:

2004 թ.-ի նոյեմբերի 9-ին ընդունվեց նաև ՀՀ Ընտանեկան նոր օրենսգիրքը, որը ՀՀ Նախագահի կողմից ստորագրվեց 2004 թ.-ի դեկտեմբերի 8-ին:

Հատկանշական է, որ ի տարբերություն նախորդ ընտանեկան օրենսդրության՝ նոր օրենսգիրքը բովանդակում է բավականին դրական նորմեր: Մասնավորապես, այն արգելում է ամուսնություն կնքել մերձավոր ազգականների, այսինքն՝ ուղիղ վերընթաց և վայրընթաց ազգականների՝ ծնողների և զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների միջև (ՀՀ ընտ. օր. 11 հոդվ, կետ (բ)): Այս դրույթը պետք է դրական գնահատել: Բանն այն է, որ նախորդ օրենսգիրքը չէր արգելում

ԻՐԱՎԱԲԱՆ ՈՒՍԱՆՈՂ ԼՐՏՈՒ թիվ 2